Փորթուգալիա, Անգլիա, Ռուսաստան, Կատարինէ Մեծ Կայսրուհու ժամանակ, Ֆրիդրիխ Մեծի Պրուսիան, Սանդիսլաւ Աւգուստի Լեհաստանը: Ամէն տեղ դատաւ ջերմ ընդունելութիւն, անցաւ անհաշիւ առաղաստներով, արքայական պալատներից փոխադրուեց աղքատ խրճիթներ՝ բոլորովին անտարբեր: Ամէն տեղ փնտռում էր հաճոյք ու զուարճութիւն եւ ամէն ինչ պահում իր յիշողութեան մէջ: Երբ ծերութեան հասակում գրի է առնում իր «Ցուշեր»ը, այնտեղ հաւաքում է ժամանակակիցների անհաշիւ պատկերներ, դարի զուարճութիւնների եւ մոլութեանց ամենալիակատար մի թանգարան: Այնպէս որ ուսումնասիրողներից մէկը՝ Բարտոլդ՝ իրաւամբ ասում է, թէ՝ «ԵԹԷ ԺԸ. դարի եւրոպական հասարակութեան ներքին կեանքի մասին գաղափար տուող ամբողջ գրականութիւնը կորչէր, միայն Կազանովայի «Ցուշեր»ի մէջ բովանդակուած փաստերը բաւական էին հաստատելու համար մեծ յեղափոխութեան անխուսափելի անհրաժեշտութիւնը»:

Իր բոլոր թափառումների միջոցին Կազանովան մտքից չէր հանում Վենետիկ վերադառնալու ցանկութիւնը: Եւ որքան մօտենում էր ծերութեան, այնքան սուր էր դառնում վերադարձի ձգտումը: Վերջապէս, 1772 թ. նա վրճռում է տեղափոխուել Տրիէստ, որ մօտ էր Վենետիկին, որպէսզի անձամբ աշխատէ յաջողացնել ներում ստանալու խնդիրը: Տրիէստում լաւ ընդունելութիւն է գտնում Վենետիկի հանրապետութեան հիւպատոսի կողմից, որը տեղեկացնում է նրան Ինկուիզիցիայի գաղտնի գործակալի պաշտօնում՝ յանձնելով նրան պայքարել Վենետիկից փախած հայ վարդապետների Տրիէստում հաստատուելուն դէմ եւ, յատկապէս, խանգարել հայկական տպարանի կազմակերպումը, որովհետեւ Վենետիկի կառավարութիւնը մեծ նշանակութիւն էր տալիս Վենետիկի հայկական տպարանին՝ մտածելով, որ այդ տպարանը գրաւում է հայ վաճառականներին եւ Վենետիկը դարձնում է արեւելեան վաճառականութեան կենտրոն:

Այս յանձնարարութիւնը Կազանովա կատարեց մեծ ճարտարութեամբ՝ երեւան բերելով սրամտութիւն, հնարագիտութիւն եւ նոյն իսկ խիզախութիւն: Եւ, ի հարկէ, մեղքը իրը չէր, եթէ գործը յաջողութեամբ չպսակուեց: Անդամ ինկուիզիտորները ստիպուած եղան ընդունել, որ Կազանովան արժանացել է ներման եւ արտօնեցին մտնել Վենետիկ*), ուր հասնելուն պէս նա նշանակուեց գաղտնի գործակալ, բայց այլեւս հասարակական բարձր դիրք չկարողացաւ գրաւել: Նրա աստղը սկսում է մարել: 1776 թուին նա գործուղուում է Տրիէստ, ինչպէս հետազօտողներից ոմանք ենթադրում են, նոյն հայ վարդապետների գործով**): Յետոյ, նոյնպէս անյաջող, աշխատում է գործակալի դերում Անտոնիո Պրատոլինի անունով: 1781 թ. նա վտանգում է ինչ որ մի յանձնարարութիւն, որի հետեւանքով շնորհազուրկ է լինում իր իշխանութեան աչքին, զրկուում է մնայուն պաշտօնից ու ոռնկից եւ սկսում է կատարել առանձին յանձնարարութիւններ, որոնց համար վարձատրուում է համաձայն ցոյց տուած գործի:

1781 թուից սկսած Ինկուիզիցիայի գիւանում Կազանովայից զեկուցումներ այլեւս չկան, իսկ մէկ տարի անցած նա թողնում է Վենետիկը: Ապա գրաղարանապետի մի համեստ պաշտօն է ստանում Դուքս Վալդէկի դղեակում, Բոհեմիայում, ուր եւ ապրում է մինչեւ մահ:

Այստեղ էլ գրում է իր այնքան աղմուկ հանած հռչակաւոր «Ցուշեր»ը:

Ցուշերի վերջին գլխում, որ նուիրուած է իր Տրիէստ մնալու ժամանակաշրջանին, Կազա-

---

*) Ինկուիզիտորների 1774 թ. Սեպտ. 3 նիստի պատճառաբանեալ արձանագրութիւնը, որպէս Կազանովայի գլխաւոր արժանիք, մատնանշում է նրա փայլուն աշխատանքը հայ վարդապետների գործում: Արձանագրութիւնը ամբողջութեամբ տպուած է՝

Bezzoni, Le Annotazioni degli Ioquisitory di Stato di Venezia. Archivo Storico Italiano, T. XI, p. p. 56-58, 1870:

**) Baschet, Les Archives de Vinse, p. 642: